



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Plimly

282

283

284


285

286

287

910.4

1-15



no. 750

no. 210

2004



ԳԵՂՋԿԱԿԱՆ ՀԱՐՄԱՆԻՔ
 Ի ՀԱՅԱՍՏԱՆ



Կ. - ՊՕԼԻՍ
 Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ԶԱՐԴԱՐԵԱՆ
 (1870)


ԳԵՂՋԿԱԿԱՆ ՀԱՐՄԱՆԻՔ

Ի Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Կ. ՊԵՅԼԷՐԵԱՆ

ՎԱՆԵՑԻՈՅ



Կ. - ՊՕԼԻՍ

Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ Ն^o 12

(1870)

13284

P

Handwritten text, possibly a title or reference number, appearing as a faint bleed-through from the reverse side of the page.

Large, faint, mirrored handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly a title or reference number, appearing as a faint bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly a title or reference number, appearing as a faint bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly a title or reference number, appearing as a faint bleed-through from the reverse side of the page.



Small, faint handwritten text, possibly a date or reference number, appearing as a bleed-through from the reverse side of the page.

Small, faint handwritten text, possibly a date or reference number, appearing as a bleed-through from the reverse side of the page.

68 284



284-2016

Ս.Ռ. ԱՐԳՈՅ ԸՆԹԵՐՅՈՂՍ :


Երբ անվրէպ աչօք թափանցենք Հայաստանի մինչեւ այն խաւարակուռ խորշերը, ուր սոխոտութիւնն ու ժամանակն ի միասին ընկերանալով զարմանալիքներ են կազմուկերպած, պիտի տեսնենք որ հնաւանդ սովորութիւններէն դեռ մնացորդներ կը դրանուին, սովորութիւններ, որք նուազ հաճելի պէտք չ'են ըլլալ բոլոր հետաքրքիր սոցալայնոց :

Մեր այս տեսրակն, որ է գեղջկական հարսանեաց մէկ նկարագիրը, շատ ժամանակ խիւր կը փափարէինք ի ըյս ածել յուսալովոր սոցալային սիրելի Ազգիա փոքրիկ ծառայութիւն մը մատուցած կըլլանք :

Այս անգամ մեր բռուն եռանդեանը պատասխանելով՝ կը համարձակվաք ինքզինքնիս փտահեցնել որ ազնիւ ընթերցողքն ալ ներուզամիտ պիտի ըլլան մեր ակամայ սխալանոց :

Կ'անցնի ներկայն, կ'անցնին նաեւ իրեն հետ այս հինաւուրց սովորութիւնները, բայց երբ սոքա տեսրակաւ մը ի ըյս ածին յիշատակ կըլլան սոցալային : Մեք մեզի պարտք համարելով՝ կը խոստանալք նաեւ ուրիշ այլ և այլ սովորութիւններ հրատարակել, եթէ ներկայիւս կարենալք գտնել այն քաջալերութիւնը, զոր Ազգը երբէք խնայած չէ, ամէն այն հայրենասէր հեղինակաց :

Ա. Պ. Վ.



Ա Ջ Գ

Տեսարանիս մէջ տեղ տեղ դր-
ուած թուանշանները կը ցուցանեն մեր
դիտողութիւնը, որ կը դառնայ մեր
ձի թերթերուն մէջ:



Բնութեան այս հիանալի թատեր վը-
րայ Հայոց աշխարհի մերկ ու տխուր
փառաց աւերակներ ցանուած են :

(Տես երես 11 :)

ԳԵՂՉԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔ

Ի ՀԱՅԱՍՏԱՆ

ՇՈՒՇԱՆ ԵՒ ԿԱԿՈՍ ԵՂԵՑՅՐ ԵՌԱ

Գարուն էր : Հայոց սարերն կանան-
չացեր : Հայոց դաշտերը դալարեաց և
ծաղկանց կիտուածաղեղ գորգերով
զարդարուեր են . մէն մի ծաղիկ , մէն
մի գալար իրենց նոր դիւթիչ գոյնով
ու բոյրով զաչերն ու զօղ կը հմայեն
ու կը խնկեն : Մէն մի անբեւի վրայ
ոսկի , մարդարիտ ու յակինթ կը շող-
չողան : Ծաղկածինն փլոր , կարծես
Հելուեռիոյ դաշտերէն խուսած եկած
է Երասխայ և Եփրատայ ափերը պրծ-
նիւք ծաղկանց սեթեւեթելու : Մէն
մի բլրակներ ոսկի ճաճանչով , գոհար-
եայ ծաղկներով զարդարուած . թե-
թեւաթռիչ հովերն իրենց թեւերը ա-
ռած , լանջուողոյ ու պերճապարանոց
գունդ կոյսին մը նման կը հագին . ու
զմահկանացուն կ'ողջագորեն : Հայոց

աշխարհ գեղոյ և զմայրմանց Ավկիանի
մը մէջ կը լուզի : Ամբողջ Հայաստան,
սիրոյ և փափկութեան նոր դրախա
մ'էր . որ կարծես թէ երկու նոր ա-
րարածոց սրտայարոյց թատրն ըլլալու
կը պատրաստուէր :

Ծառոց ու անտառաց մերկ ու գօս
հողերը պտկեր , նորափթիթ ընկուզի-
ներով բողբոջեր են : Վարդն ու յաս-
միկ , քրքում , նունուֆար ու նարկիզ
ծիլ ծիլ բացուած , կարծես թէ Աս-
տուծոյ բնութեան գիմաց վրայ ցան-
ուած ժպիտներ են :

Բիւր թռչնեկք , թիւոց ու սա-
րից մանկիկներու նման կ'ոստոտեն
ու կը ճռւողեն , հրեշտակներ են , որ
կարծես երկինքէն յերկիր իջած ,
քաղցրակարկաջ առուաց ծաղկաւէտ
ափերէն անթարգմանելի լեզուաւ
բնութեան ու մարդոյն հետ խօսակից
կըլլան : Անտառաց սխրածայն երգե-
ցիկ , քաղցրադայլայլն պըլպուլիկ իր
զմայլելի ձրնիկը ձգած սար , ձոր , ու
դաշտ . բնութեան սրբավայրին մէջ

սաւառնացոյ Սրորի մը նման , կը գեղ-
գեղէ : Յիրաւի նոր Սրորէ մը է այդ
պըլպուլը . տարերք , դազանք , թուփ
և անտառք հիահրաշ գիւթանքէ մը յա-
փըշտակուած ուշասոյդ կ'ունկնդրեն :

Հեշտասոյլ զեփիւռիկն իր Եւողեան
տաւիղն առած , թեթեւաթուիչ կը
ճախրէ ի ձոր , յանտառ և յալեակ . և
երկնային Սրորի մը նման , իր քնքոյշ
թաթիկներով՝ ծաղկանց խունկերն , ու
պըլպուլին մելամախճոտ հառաչները
քաղելով , կը տանի սփռելու հոն , ուր
Սէրը՝ Հաւասոյ սեամին վրայ . կրօնի
պարկեշտ թեւերուն տակ . հրեշտակա-
յին ոգւոյ մը նման կը մըհափէ . ու
անմեղութեան նման կ'երազէ . կը սրի-
ռէ հոն , ուր ֆերոբին ու Ապօլօնի
քնարաց մրմունչներն չեն դռնչեր . կը
սփռէ հոն , ուր վիշտք , թախիծք ,
սուգ ամայացուցած են . կը սփռէ այն
սրտին ու հողւոյն մէջ , ուր կսկծանաց
եղանդները , և հալ ու մաշ հէգերու
խոցոտեայ տատակները աւերած ու
քայքայած են : Մերթ իբր լուսակուր-

Կամ անբերայ ու յառուայ , և դու արթա-
 րար հոգիանեաց պարիկ մը անունց դո-
 վամիխուսա դամուկ շունջերն տաւած
 կը սուրայ ոյն ազեղ կէզ գ աշտին վրայ ,
 և հոն վաասակարեկ մշակին ճակատն
 սղագող արեան աղի արցունքներն իր իւ-
 սպունդ կը ծծէ : Մերթ սրարտասեւզ
 ու դեւորին խոնջ անդամոց դով ու հան-
 գիւսա ընծ այեւրով դուրցեա թէ Եհովայի
 շրթ ունքէն թաւած մէկ շունջն է , որ
 երկինքէն հովիկի մը թեւ տաւած իջւած
 է այդ մահուան ճարխն մէջ , զմահիւ-
 նացուն իր գուրդաբանաց վայրկայանք-
 ներով ախտիւրու : Եւ այժմ ընդ այնպիսաբար
 բիւր արծաթեաց անխաւախտ առ-
 ուակներ , ընկերթ փիւրեղ լծակներ յօ-
 բնեւրով մերթ օճանդատցա սպտակեւրով ,
 ի ծոց ծաղկանց րչ դարարեաց սիրա-
 կարկաչ կը խոխոջան , կարծեա թէ բը-
 նա թեան Սասնած ու հւոյն հեռամը-
 ունջ երգերն են : որ ծփեւածօճ լա-
 բերով հովիկի մը սիրասոյլ թեւ իկնե-
 դուն տակ կը հոռուչէ : կը սիրեն կոյնն
 ու վարդ իրենց պատկերներն այս փիւ-

բերաւիսցլ Դու վճիտ հայերս Եւ մէջ նր-
կատել , կ'անձկայ նշոյլն հոն փայ-
փլայ , կ'անձկան հոսանիք հոն դալ
ի լիւղ :

Բնութիւն այնպէս շքեղ յարուցեալ
էր իր գերեզմանէն , այնպիսի կայտու-
ոտ թիւն ու կենդանութիւն զդէցած
էր , զոր կարծեա թէ դեռ նոր ստեղ-
ծած էր Նախախնամութիւնը :

Բնութեան այս հիանալի թաանելի
փրայ Հայոց աշխարհին մերկ ու արտաբ-
փառաց աւերակները զանաւոր էին .
արայ մերկութիւնը ծածկելու , և արխ-
րութիւնը արտփելու համար , զթուա ու
մայրախնամ բնութիւնը կանանց օժո-
ցով մը կը ծածկէր դանտնք , ու փա-
ռաց այն ահեղաշուք գերեզմանները
ժողովներով կը դարդարէր :

Ահ այն ժողկարպասէ սայրերու փրայ
կարծեա թէ Հայոց մեծայ փաղեմի
պարծանքները ժողկէ գրեթով արձա-
նադրած էր բնութիւնը :

Այս վեհաշուք թաաներ , լոկ Աստ-
ուած ու հրեշտակներ և մատանք իւր

քերթողին թռչուն երեւակայութիւնը
հանդիսատես էին :

Աստուած իմ, ո՞ւր է այս տեսարա-
նի փառքն աւելցնող դերասանը . . . :
Բայց ի՞նչ կը տեսնեմ, Աստուած իմ.
ո՞վ է դա, որ անվեհեր ընկողմնած է
սա հովանախիտ ծառատանեաց տակ,
և լուսակարկաչ աղբեր քովիկ. հրեշ-
տակ թէ մահկանացու է. ծաղիկներ
գլխուն բարձ, ծառոց հովանիները
վերմակ առած. այնպէս նիրհած է :
Հովուական սրինդ կձնի ծառոց սեւ
կողերէն ի վար կախած, մերթ ընդ
մերթ զեփուռին հետ կը սուլէ. ոս-
տածայր ցուպ մը ընդարմացեալ օձու
մը պէս քովն ի վեր ընկած է դարարա-
ւէտ մարդագետնին վրայ : Պըլպուլն իր
երգով, աղբիւրն իւր խոխոջով կ'օրօ-
րեն նորա քունը : Տատրակի նման թե-
ւին մէկը պարանոցին յեցուցած, միւսն
այ կամար նետած է ճակատին վրայ. իր
չրթները նռան նման կիսարաց, սէր
կը բուրեն, սէր կը շնչեն :

Հովեր իր երկայնաատէղ արտեւա-

նունքները քերելով, և իր շագանակա-
գոյն վարսից հերարձակ խոսպոպիկները
ծածանելով, որ գանգրադ եղ փունջե-
րով ուսոց վրայ կըծփան, և իր փղոս-
կրեայ պարանոցին արեւարդել մ'են,
հրեշտակատեսիլ դիմաց վրայէն թե-
թեւատյլ կը սահին կանցնին. ինչպէս
թեթեւ երազներ ամբիծ հողւոյն վրայէն:
Կուրծքը մեղմուռուցիկ հառա-
չանքով կ'ելեւէջէ. նշոյլք, որ մերթ-
ընդ մերթ դողդոջ տերեւոց մէջ կը-
սահին կ'իյնան, իր մակիկաձե ճակտին
ու կոկոնացեալ ականողեաց վրայ կը-
շողշողան: Վարդ ու շուշան ցանուած
են այտերուն վրայ. հողեղուարթ ե-
րազներ մերթ ընդ մերթ ժպիտներ կը
գծեն անոնց վրայ: Ահա մեղուք կը
բզզան, իրենց մեղրին նեկտարը այն
այտերուն վարդերէն ծծել կ'ուզեն:
Ահ, հեռացէ՛ք, հեռացէ՛ք ջնջին մի-
ջատներ. մի գուցէ արատէք ու թու-
նաւորէք սիրոյ վարդաստանը: Ահ,
Աստուած իմ, երկրպագելա կուգայ
այդ երկնատիպ պատկերին . . .

Կոմսանե՛ն ան թէ պատանեկո՛ւ Տիմ՛է
 — Անցորդ մ՛է անշուշտ Սրինո՛ր, ցամազ
 և անհասանդին թուփերէն զոյգ մը արե
 բեխներ հե՛լ կատարածը՝ լայի բաւո խոյ
 Ե՛ւս կարթնայ անհասարկ բայտ
 աչերն մէջ աչի՛ն հարմարանիկո՛ւ Տիմ՛է դա՛ն
 Զոյգ մը ճակուն միանիշակներ քրնէ
 քոյչ ծոյցին մէջ մի թիթամ հե՛ր աչա՛ն հա՛ն
 համարե՛ն Տիմ՛է առ անո՛ւն ցգ խոյտ
 Ե՛րեսէ՛ք Հայոց դաշտերուն Ամաղոնի
 ինչ շուն տղեխներ յոտո՛ւ ցուպն ի ձե՛ն
 ախա՛յ տրինո՛ւ յոտո՛ւ թա՛ կամիլլայի նման
 թիթոյ՝ ո՛ր ծաղկանց փրայէն սուրաբով
 տե՛ թռչերով զէպ ի երամակը կը վազէ
 որք մարտիթաթել ուռենու ոյմը ներքե՛
 տապաղած կ'որոճան։ Ո՛հ ցնցոտիք սցո
 փոսիտ կ'մարմնոյն պահարաններն, թուե՛ր
 փեղն ա՛ փռչերը նարա՛քրդ զե՛սլ քղանո՛ր
 ցիւ՛ ծախնները ոչխարաց դեղման նման
 կը կարմարանն, քայց նա անհող, ինչպէս
 թռչուն կամ՝ դառնու կ'մը որ թառուտ
 ներթ, անոյսմ ասան իրենց փետուր կամ
 դեղ մը աւար կուտան նոցա Տիւղերուն
 Այլ ոչ տանք անհաս հոփու ախան քայց

րատուց սրինդն կը յարդարէ , անշուշտ
 պիտի եղանակէ : Բայց սակայն իւր ա-
 շերք միշտ յարամ է դիմացի դաշտը ,
 որ մշակ մը քրտնաթոր ճակատով ա-
 րևուն կիզիչ ճառագայթներուն ներքև
 անխոնջ կ'աշխատի : Ա՛հ այդ աշերք ,
 այդ նայումքով որ ինչ մէկը չեն դի-
 տեր դիտել , բայց եթէ հարապատ մը
 . . . անձկայի եղբայր մը . . . : Ինչ
 թօք դիմացի արան աշխատող , կայ-
 տաւ պատանին ճաշանայ (այս էր
 մեր հոգու մ հոգին անունը) եղբայրն
 էր :
 Ուստի իրք պանդառ թուած ան
 դէմ , որ զինքն գոյարար հասկնէրով
 կը գտարթանէր . ու իր եղբայր տա-
 պով ու խորհակով կ'այրէր ու կը տու-
 թէր , սա երգն եղանակիւ սկսեց :

- * Մայր հոսիկ մեր երկրին ,
- " Հէր չը ցանկամ քո շնին ,
- " Քեզ այն Գոտում խորտիկ ,
- " Հայ աշխարհիս է սա ել :

* Գեղեցիկ :

« Տար , Տար , շնչիկդ դըղըղուն *

« Գեհ ի եղբայրն իմ սիրուն ,

« Մաճկալ է նա մեր արտին ,

« Քրտինք ճակատից կը հոսին :

« Ես էս կանանչ խոտերուն ,

« Ղերև պառկիմ օրն իբուն ,

« Ախ , նա իսկի ** քո շունչին ,

« Մէջ արտերուն չէ շնչում :

Շուշանայ այս երգը իր եղբայր Կա-
կոս կը լսէ . քանզի քրոջ երգելուն
ձայնը առածին պէս , թողեր էր աշ-
խատութիւնը , ու եկած էր մերձակայ
Ժայռի մը տակ մտիկ ընելու :

Կը վազէ , և քրոջը վիզը կը պլլուի ,
և ուրախութեան հեկեկանօք շնորհա-
կալ ըլլալէն զկնի , կը յարէ :

— Քոյրիկս , Հայրս ապաց թէ Շու-
շանայ ընկեր մը տի բերեմ . որ էնիկ
տան նայի , տուն էլ ոչխարներաց :

* Զովարար :

** Բնառ :

— Գո խօսկերից ինչ հասկնամ եղբայր իմ,

— Ըսկուն* , որ ասացի .

— Ուրեմն քե կը կարդէ՞ , կը պատկէ՞ , (հեղհուծեամբ) :

— Չըխօ** չըմ գիտե . (Վ)


Շուշան , որ իւր ճարտարամասութեամբ գիւղի հովուհեաց առաջինն , և աշարագլուխն էր , ձեռքը կը պարզէ , ու իրենցմէ քիչմը հեռուն , աղբեր մը եղերքը կանանչազարթ փոքրիկ կողով մը մասնանիչ կ'առնէ , ըսելով (առանց կատակի) ,

— Իրիշկի , իրիշկի*** եղբայրդ իմ , իրիշկի՛ էսա կողովին , ինոր մէջի էլածները տեսնաս կը շիվարես : Մարդարիտի համար տեսակ , տեսակ ծաղկներից պասկ շինուած են : Տե՛ս , տե՛ս (կողովը կը բերէ , ու կը բանայ) մեր նոր էկած հարսին համար են :

* Ս. յնպէս :

** Իրաւոր :

*** Նայէ նայէ :



289-2016

— Բայրիկա , կրակ կակուս , հօրս ա.
սածը ըղձըղ ի :

— Խապա , խապա , պիտի պատկէ
քեզ . Շահ-պաղըլի խամբա* Եղոյի
աղջիկը Մարգարիտ քեզի կնիկ պիտի
էլնի :

— Է՛հ . . . աղէկ : Բայց սաս՛ քոյ-
րիկա , էսա դրակէն** ծաղկներն ո՞վ ժող-
վեց , և ո՞վ շինեց :

— Գեղիս հովու Նիք ժողուեցին :
Մանուշակ ծաղիկով ես եմ շինե , նար-
կիսաւորն վարդանի աղջիկը , Նունու-
ֆար շինեց , կակաջ և դինարբու ծաղ-
կներով և դալար խոտերովն էլ մեր
Սանդուխտի շէնքնի : Մըկայ*** տեսա՞ր
եղբայր իմ , ըղձըղ պիտի պատկենք
քեզ :

կակոս ուրախութեամբ ինքզինքն
կորանցուցած , շտապաւ մը այսպէս
կրակ ,

* Գիւղի ուէսի երկրորդը .

** Ամէն , դամէն :

*** շինեց :

Handwritten notes in the right margin:
Բայրիկ
Է՛հ
Բայց

— Որ ըսկունի , արե՛ , արե՛ ոչխար-
ներդ առնենք տունը երթանք , մօրս
պատենք :

— Դասար կա՛ց , կրակ Շուշան փե-
հանձնօրէն , ինանք ամէնքն էլ դիտեն .
դու գնա ամուգ փորէ , պրծ իր . իրի-
կուն կ'երթանք : Տէլ* իմ՝ ոչխարնեքս
էլ անօթի են , տո՞ր** տանենք , ի-
րիչկի՛ , խօրօտ չուռօյխ (իւր ամենա-
սիրելի այծն էր այս) փորը բան մը չը-
կայ . մըկայ գնա՛ եղբայր իմ :

— Կակոս քրտըր թախանձանայր շը-
կարենարով գէ՛մ գնել , կը հեռանայ ,
բայց սիրար . . . :

ԿՈՒՍԱՆԻՅ ԳԻԻՂԸ

ԵՒ ՀԱՐՍԱՆԵԱՅ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻԻՆ

Վանայ Այգեատանու մէջ տեղ , Սը-
հայտ ճառտէ անուամբ երկու կողմէն ու-
սիներով , զոյգ զոյգ առուակներով
պարզ արուած , խիտ շքեղ և բնդ աբ-

* Գնա :

** Ո՞ր :

ձակ վաղոց մը Այգեաւանեայց գլխէն
գորս ելլելով, երկու ժամու հետեւ
ւորութեամբ, ողղակի կոխապանից
գիւղը կը տանի :

Աղդային պատմագրաց լատեներուն
նայելով բազում տարիներու գիւղ մըն
է այս, և բաւական բաղմամարդ . իսկ
այժմ միայն 25-30 տունէ բաղկացեալ
բարձր բիրակիմը վրայ տձև բան մը կ'ե-
րեւի : Բնակիչք սորա ընդհանրապէս
երկրագործ, և մասամբ իւրք ջաղաց-
պան են :

Գիւղիս արեւմտեան վառար որ ձա-
րին մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչայ վան-
քն է . հարաւային Սրեւելեան կողմը
կէս ժամու չափ հետաւորութեամբ վե-
րին վարագ իւր երկնատուր պարգե-
ւօք կը սնանայ : Հիւսիսային Սրեւել-
եան կողմը, գրեթէ կից գիւղիս, բաց
ի բազում ծառերէ, կը գտնուի նաեւ
մեծկակ ուռի ծառ մը, որուն տակէն
կաթնահամ, անուշ և պապղուն աղ-
բիւր մը կը բղխի : Այս վայրը առաջն
կ'անուանի, բովէն գիշեր յատկապէս

ճրագներ կը վառեն հաս, նա մանաւ
ւանդ շարաթ (կիրակամուտ) երեկոյ-
ները : Ինչպէս որ տեղւոյս բնակիչք,
նոյնպէս ալ ուրիշ գիւղացիները, քաղա-
քացիք ուխտի կուգան Ս. վայրիս, և
ասոր հետ մէկտեղ իրենց հազուամե-
րէն կատրներ կը կարեն և այն մեծկակ
Ս. ուսինուոյ ճիւղերուն՝ կը փաթթեն :
Ս. ծառը կը լսէ նոցա աղաչանայր, և
խակոյն կը կատարէ նոցա խնդիրը . . . :
Եթէ սք այս Ս. ծառէն ճիւղ մը կամ
տերեւ մը կարէ, ուստանի վառէ, նա-
րա գերբնական զօրութեամբ յեղակարծ
Ժամանակի մը մէջ կը պատժուի : (2)

Կոխպանից գիւղը խիստ անշուք է
բսինք, տուներնին դաժ, գրեթէ գետ-
նին հաւասար : Խրաքանչիւր տան ան-
ջրպետը ճօշշ կոչուած քարերու շարք
մընէ : Տանիքները հողով ծածկուած և
կրարու կից են : Եթէ տուներուն որը
որուն ըլլալը կուզես խմանալ, պէտք է
ամբողջ կոչուած կոյտէն որոշես, որ կը

* Աստեղիքի շտեմարան :

բարձրանայ իւրաքանչիւր տանեաց վըճ
բայ :

Այս ամիսցը կը պարունակէ իւր մէջ
քակոր (չոր կու) , սրտուր (սչխարաց
աղբ) , փթիւր (թէղէք) ևյնն փառե-
լիքներ :

Բարձրիկեկ ամիսց մը Ռէս Մառաօյի
տանը միւսներու մէջէն կ'արոշէ : Մեծ
աղմուկ մընէ տունին մէջ բրթիւր :
Գունէն ելլող մանաղաց թիւր չափա-
զանց է . սրբ տիկերով գինի կը բերէ ,
սրբ դրան ճակատար զանազան ծաղկե-
րով կը զարդարէ : Աստ խումբ մը կը
նիկներ բաղարջ և փոխիմոյ կը շինեն .
անոյ կերակուրներու համար մեծ պատ-
րաստութիւններ կը տեսնուին , և այս
ամէնք հարսանեաց համար են :

Ռէս Մառաօյի սրդիւն կապտա կը պը-
տակուի (յիշէ ' ընթերցող այս այն կա-
կան է , որ լերան մը ստորտա , իւր քոյր
Շուշանայ հետ կը խօսէր :

Վերջը շարժուող ծաղիկներու շարք

ԿՆՔԱՀԱՅՐ ԱՂԱՅԻ ԳԱԼՈՒՍՏԸ

ԵՒ ՓԵՍԱՅԻ ԱՅԻԼԻԸ

Օրը ուրբաթ է : Քաղաքացի Սե-
րովբէ Սալորեան, որ կակտսին քաղոր*
բըլալու պատիւն ունեցեր էր . կը հրա-
մայէ իւր ճերմակ բժաւոր ձին յառաջ
բերել . և վրան նստելով կը մտրակէ
և շուտով մը կոխապանից գիւղը կը հաս-
նի :

Գիւղացիք կը գիմաւորեն Սերովբէ
աղան, և առօք փառօք կը տանին
բաղմեցունել իրեն յատկացեալ պատ-
ուաւոր տեղը :

Փեասցի քոյրերը և աղղակամները
կարմիր կանանչ բուրդերէ պսակներ
շինելու կը դրային . բայց սակայն մէ-
ջերնին մեծ նախանձութիւն մը կը տես-
նուի, և իրարու հակառակ ցոյցեր :
Բոլոր ճիգերնին կը թափեն իրարմէ
դերազանց շինելու, սրովհետեւ ասանց-
մէ (պսակներէն) ամենադեղեցիկը փե-

* Կնքաւոր :

տայի գլխոյն վրայ կը դնեն :

Այս պատկները հիւսողները որքան
լլան , այնչափ են և փեսային մտերիմ-
ները :

Հիմա փեսան պիտի ամիլեն , բայց
ինչպէս :

Արք և կանայք ի միասին շրջան
կազմեալ , փեսան մէջերնին առած՝ կը
նստին . սափրիչն ալ փեսային քովը ,
որն որ սկիզբ կ'առնու օրհնեալ և զուտ
գինով փեսային երեսը լուալ , բայց
դեռ բաւական ժամանակ սպասել հարկ
է : Քանզի սոյն միջոցին խաչածեւ փայ-
տի մը վրայ դոյն զգոյն ապրշուսներ կը
փաթթեն , տեսակ տեսակ ազնիւ մրր-
գեղէններ վրան կը շարեն . և խիտ
յարգանօք կը պատուեն զայն : Այս
խաչածեւ զարդարուն փայտին «-»-ը ա-
նուն կուտան :

Այս «-»ը նախ կնքահայրը ձեռքը
կ'առնու , հետեւեալ մազթանքն ընե-
լու ,

« Աստուած շատ օրերաց խառնի ,

Աստուած շատ խոսց տայ , խեղով մե-
րով * պախի , սխմն ծեր անի , մէկ
պառցի վրայ ջոչայուհի , ևյն ամէն : »

Այսպէս կարգաւ մինչեւ ցյեալին աղ-
գականն ու բարեկամն իրարու կուտան
մի և նոյն մազթանքն բաւելով :

Մայն միջոցին Տ. Թ. վարդապետը
Մաշտոցը ձեռքը ներս կը մտնէ . և
տոյն «-»-ը , որ բազմականաց մէջ կը
շրջէր . առ ինքն բերել կուտայ , կ'օրհ-
նէ և վանքին շահ մը հայթայթելու
համար աճուրդի կը դնէ :

Ազապ (անկին Երիտասարդ) ներք
մեկուսի կը ժողովէ , և անոնցմէ ով որ
աւելի իւղազին նախը մանքին , նա
տէր կըլլայ «-»-ին , և բոլոր ազապնե-
րուն գլուխը (ազապ պաշր) : Ամենայն
ինչ նորա հրամանատարութեան ներ-
քեւ պիտի ըլլան . ով որ նորա հրամա-
նէն խտտորիլ ի միտ ածէ , թող սարա-
փելի պատիժ մը յանձն առնու : Այս

* Հայրով . Մայրով :

մեծ պաշտօնատարը կարգեցաւ իւր ա-
ւելի նուիրատուութեամբ (Վ. մէճիւս)
Ռէս Սարգսի որդի Միքայօն : Ա-
ստուծոյն աւ փեսայինք քոյր կայնե-
ցաւ : (3)

Սափրիչը կրկին ոտքի կ'ելլէ . ալ
ժամանակ է փեսան ամիլելու : Կ'ամիլէ
համայն և այնպէս երեսի վրայ փոքր
ստակի մը մեծութեամբ , բողբոսկ բող-
բոսկ շատ մը տեղեր թողուցեր է :

Պատճառ .

Արդէսդի ծնողք և ամէն ազգա-
կանները դան ստակ կամ տուէր մը չը-
նորհեն , և մէյ մէկ կտոր ամիլել սան .
և ճիշդ ալ նոյնպէս եղաւ :

Հօրը դալստեանը համար հանդի-
սականք իրենց գեղջկանքան եղանակաւ
այս երգը կ'երգեն :

« Թագաւորի խէր կայնամ պիտէր ,

« Թագ շուռ կեէր , շուռ կեէր ,

* Փեսային Թագաւոր , և հարսին Թա-
գուհի կ'անուանեն :

« Շուռ մուռ կեէր ,

« Բարով էս առն կեէր :

Թարգմանութիւն .

« Թաղաւորի հայրը կայնամ պէտք էր ,

« Թաղ շրէր , շրէր ,

« Շուրջ դառնայր ,

« Բարով այս առնը դայր : »

Անսխալապէս փեռայի հայրը Ռէս
Մառտոն տեղէն կ'ելլէ , կուգայ իր
նսէրը կուտայ , որք են . երկու դոյզ
դուլպայ . չորս հատ էւզն , (+ օչնի
վրան փաթթեկու համար) . մէկ հատ
արախճին . և ուրիշ քանի մը մանր
մանր բաներ , և այն բոլորակ մասերէն
մինն ամիլել կը հրամայէ :

Կը կրկնեն վերայիշեալ երգը մօրը ,
քրոջը և ազգակիանայ համար ալ , ու
բոնք եւս այն օրինաց հետեւելով ի-
րենց պարտքը կը կատարեն : Եւ ապա
փեռայի համար պատրաստուած գոյն
դոյզն էւզաներով զարդարուած օչնի յա-
ռամ կը բերեն , և որուն վրայ երգեր ,
մաղթ անքներ ըսելէն զկնի , կը հրաւի-

բնն այն ամէն օրիորդք, որ բերեն ի
բնաց հիւսած պատկները յընտրութիւն,
թէ ո՞րն է ամենադեղեցիկ և փեսային
վրայ կրելու արժանին : Շուշանայ ու է
դործայ մէջ յառաջագէմ բլլալը լաւ մը
դիտեցեր ո՞վ ընթերցող, ուստի չը պի-
տի տարակուսիս, որ հիմա այն դոր-
ծոյս մէջ եւս պիտի ցուցանէ իւր յա-
ռաջագ խնութիւնը :

Նրեանն և եօթն պատկ շարուեցան
խմբեակին մէջ տեղը, սակայն Շուշա-
նայ պատկի աչքը դէպ ի փեսան յառած
կը թուէր :

Հուսկ ուրեմն կը ըմբան և փեսան
ածիլելէ : Անթառամ ծաղկէ խնձոր մը
բողորած՝ կարսիր թաշկինակի մը մէջ կը
դնեն, և կնքահայրը զայն պաշտօնա-
կան կերպիւ փեսային կը մատուցանէ,
որն որ ծունկի վրայ դարով ձեռքը կը
համբուրէ, խոնարհարար կառնու զայն,
և բերնին կը դնէ աջ ձեռքովը մինչև
հարսանեաց շորտորդ օրը (չորեքշաբ-
թի) :

Ասի երբէք արտօնութիւն չունի
բարձր ձայնիւ ու համարձակ խօսելու ,
իր քովը փոխանորդ մը կեցեր , այն է
«գառ-արշն» , կը խօսի , ինչ որ փեայն
խը ախանջին փախայ : (4)

ԱՂՈՒԷՍ

Կակոսի քոյրը Շուշան այսօր իւր
հօտը բոլորովին Նունուֆարին յանձնե-
լու ստեղծեր էր , քանզի հարսանեաց
պատրաստութիւնը չէր ներեր այս քա-
նի օրը իւր պաշտօնին մէջ գտնուիլ ,
բայց և այնպէս աւանց մէկի գիտու-
թեան տրեխները հազամ՝ դէպ ի Յի-
սուսի աղբիւրը կրնիմանայ , որ ոչխար-
ները Նունուֆարի առաջնորդութեամբ
եկամ էին ջուր խմելու , և ցերեկուան
հանդատութիւնն առնելու :

Շուշան իւր քաղաքավարութեամբ
Նունուֆարին սիրոյ բարեւ ընծայելէն
յետոյ , հրաման կը խնդրէ հօտին մէջ
մտնելու , թէպէտև ոչխարներնայ ի-
րենն են , և կը մեկնէ ինոցունց ճէճրած

անուն խոյն : Եւստօ Գարին հրամայե-
լով շատ մը ակնախառիս գոյնով և ըզ-
մայլելի անուշահոտութեամբ լի ծաղիկ-
ներ քերել կուտայ , և ճէհրանին հետ
մէկտեղ կ'առնու տունը կը տանի : Օ-
րիորդները դարձեալ ի մի կը ժողովին ,
ճէհրանի ճակատը հինայ կը գնեն .
այն ժողոված ծաղիկները ոչխարին բու-
լոր մարմնոյն վրայ վերէն ի վար կը
հիստեն . տեաներու արժանի շքեղ պատ-
կեր մը կը ներկայացունեն . և քերի
խաչոյին յանձնելով Շահ—պաղի դիւզը
խնամիին կը խրկեն :

Այս պաշտօնատարին , սյսինքն խոյ
տանուղին Ալ—ե" արագու կուտան , և
ճիշդ այն անուան համեմատ պիտի
գործէն , ինչ որ գործէ :

Այսօր , յարում խոյն Շահ—պաղի
տարա , կը նշանակէ թէ յաջորդ օրը
նորա փոխարէն աղջիկ մը հարանու-
թեան պիտի տարուի , խիստ ծանր է
դիւզացւոյ հանդուրժել այս արարու-
ղութեան , աղջիկ մը անբան կենդանու-
ւոյ մը հետ փոխանակել . . . , վաճառու

լոյ միշտ կը խորհին այս աղուէս—մարդոցն գլուխը փորձանքի մը կամ վնասի մը հանդիպցնել : Հոս պէտք է փայլի աղուէսին իր աղուէսաբանութեանը մէջ, և այնքան աղմկայից բաղմութեան մէջն իսոյս տալու միջոց դանել : Քեռի խաչօջի հասար այս ամէնքը թեթեւ բաներ են . ինքն է յաղթանդամ, ունի գորութիւն, և իւր վարած պաշտօնին համեմատ քաջ գիտէ խորամանկութեան արհեստը, ալ ինչ կը պակտի ունոր ուրեմն իրեն հասար այս թատրոներկայացնելու, — ոչ ինչ, և բաց ի անկէ յաղթական թրոշակաւ փառաւոր վերադարձ մը վկայ կը կանգնի իւր քաջութեանց :

ՀԱՐՍԻՉԻՐ ԵՒ ՇԱՀ-ՊԱՂԻ

Օրը շարաթ է : Պատահանէն ծագած արեւուն ճառագայթը Ռէս Մատուօյի թոնիրի վրան հասեր է, ուստի ժամը ճիշդ վեցն է* : Կոխպանցւոց

* Սյս է գիւղացւոց ժամացոյցը :

խառնաշփոթ ձայներուն սահման չը-
կայ, քանի՛ չհարսի՛նք երթալու պատ-
րաստութիւն կը տեսնեն :

Ֆաղաքացիները կ'ելլեն իրենց փա-
ռաւոր զգեստները (Տիւղակ և Էմբել)
կը հաղնին , դիւղացիքն ալ գոյնզգոյն
հագնաներով փաթթուած՝ երկայն եր-
կայն * շշշները դուխնին կը դնեն .
տրեխնին կը հաղնին , և մէյակ ալ
բարակ դաւաղան ձեռուրնին բռնած ,
(ամանք սորա տեղ սուր) և ընդհան-
րապէս վահան ուսերնին , հարար բե-
րելու համար ճամբայ կ'ելլեն : Չը մառ-
նամք յիշելու որ կնքահայրը ճերմակ
բծաւոր ձի մը նստեր , և իրեն հետ
մէկտեղ ուրիշ քանի մը այլու *
առաջնորդութեամբ *
Մէլոյին ** , առ * Էրաւոր Մէլիք *
թոխին առջեւէն կըն-
թանան :
* Բոլոր դաւառի միջխամին է այս անունը :
** Մէլքուն :

* Բոլոր դաւառի միջխամին է այս անունը :
** Մէլքուն :

պելիք զոյգ եզանց վրայ բարձած կը
տանին , քանզի հիւր գացած տեղեր-
նին իրենց պարենով կերակրել պարտ
է : (5)

Այս խմբեակը քսան երիտասարդնե-
րէ կը բաղկանայ , և նոցա կ'առաջնոր-
դեն զաւանս և նաղարան (տաճար) :

Երթայք բարե՛աւ

Հարար Շահ-Պաղի ըստած գիւղէն
պիտի բերեն : Արդ մինչդեռ այս գիւ-
ղը ընթերցողաց շատերուն անձանօթ
կը թուի , ուստի կը փութամ անոր վը-
րայօք քանի մը տեղեկութիւն տալ :

1534 թուականին , Պարսից բանա-
կալներէն Շահ-Խանայիլ բազում զօրքով
Հայաստանի վրայ կ'արշաւէ , կը տիրէ
նորա բաւական մասերու , և վանայ
Այգեօտանէն երկու ժամաւ հեռաւո-
րութեամբ , ճիշդ հիւսիսային կողմը ,
բարեբեր զառխալայրի մը վրայ սյգիներ
անկել կը հրամայէ . և իր անուամբ
Շահ-Պաղի կ'անուանէ զայն :

Մարդիկ տեղւոյս պտղաբերու-
թիւնը տեսնելով՝ օր ըստ օրէ հոն գի-

մեղին . ուր բնականաբար այսօր բնա-
 ւական բազմամարդ է : Տուներնին կա-
 րելի եղածին չափ ձեւաւոր , բնու-
 թիւննին ազնիւ և մարդասէր են : Քա-
 զաքացւոյ և Այգեւատանցւոյ նման ա-
 ռաւոօտ երկերոյ շուկայ կ'երթեւեկեն .
 սակայն ոմանք ալ երկրագործութեան
 արհեստին կրողապի՞ն :

Այգեւատանց Վանայ Այգեւատանը , կը
 համարձակիմ ըսել նաեւ ուրիշ քա-
 զաքներունը կը գերազանցէ . պատու-
 ներէն նշանաւոր և առատ են , դեղձ
 (շէֆթապլո) ծխոսն (խոյսի) և սերկեւիլ
 (այլա) , խաղողի ամենապատուականը
 և հետեւաբար անոյշ և զօրաւոր գինին
 հա կը գտնուի : Տիփսիս գործածուած
 էրախէթու գինին ասոր քով բան մը չէ :

Ահ , ի՞նչ բաներ չըրաւ , և դեռ
 ինչե՞ր չընէր այս գինին . . . :

Կարգ մը ձկեր ակեկտով բարձուած
 խամբա Եղոյի այգիէն կըլլով իւր
 տունը կընթանան . ուր արտաքոյ կար-
 գի լուսաւորութիւն մը կը արեւ : Այ-
 ւայ եղևու ճրագներ աւելի կը վառ լին .

բազմաթիւն մը տան մէջ խառնած է ,
և մեծամեծ պատրաստութիւններ կը
տեսնուին : Խամբա Եղոյի աղջիկն է որ
Կոխպանցից դիւղը հարսնութեան պի-
տի տանին :

ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Յեղակարծ ժամանակի մը մէջ , եր-
կայն ԳՅԵՂՈՎ , սեւաղէմ , քիթը չափէն
աւելի մեծ , ձայնը հաստ , կոշտ մարդ
մը ներս կը մտնէ , և պուպով կըսէ ,

«Օ՛ Եղօ , էլէ՛ք , էլէ՛ք , մեր խնա-
միք դեղով Երուսաղէմ եկեր են . Կոխ-
պանց խակի մարդ չի մնացե . մէկ էլէ՛ք
տեսնանք խոնց խեւ ինչխ պիտի ա-
նենք : »

Եւ արդարեւ Շահ-պաղիի Արեւել-
եան կողմէն Կոխպանցիք խուռն բազմա-
թեամբ կ'արշաւեն դիւղին վրայ . սոցա
առջեւէն կ'ընթանայ Կոխպանցիք , ու
բոց ձայնէն լեռները և ձորերը անդրա-
դարձ արար ահա որ արձագանքներ կը
չարտասանեն :

Շահ-պաղրցիք զայս անանե շուս
պէս, ամէնքն ի միասին, գիւղի մէ-
տէն սկսեալ մինչեւ փոքրիկ մանկաբն
կը դիմաւորեն զանոնք. սակայն անս
լնթերցող, անս թէ ինչպէս.

Իբրեւ երկու թշնամի բանակ զօրաց
զէնընկէց մը իրարմէ հեռու կենալով
մենամարտութեան գեր մը կը ներկա-
յայնեն:

Գնունեաց գաւառի Գործսթցի Մէ-
լիք Մէլօն, որ գինավարութեամբ ե-
րեւելի հանդիսացած էր վասպուրակա-
նի մէջ, Կոխպանցւոյ կողմէն սուր ի
ձեռին, վահան յուն յառաջ կը խա-
ղայ. իսկ Շահ-պաղրցւոյ բանակէն ալ
Պաղոս ախպէր նորա գէմ կ'երլէ: Եր-
կու կողմէն ամենու ձեռքի փայտերը
գէպ ի վեր կը բարձրանան. ժամէ մե-
նամարտութեան:

Գործսթցի Մէլիք Մէլօն, իւր ա-
բիւնուռ շտ աչերով ակնարկ մը կը ձգէ
Պաղոս ախպօր վրայ, եւ «Շահ Սլահ»
լսելուն պէս սովալլուկ դայլերու նման
իրարու վրայ կը յարձակին, սուրերը

վահաններուն կը զարնուին և երկու-
 քաջաց զօրութիւնը հաւասարակից կը
 թռի . գրեթէ ժամ մը այսպէս կը շա-
 րունակի , և ուրա Պուզոս ախպարը
 յաղթութիւնը իրեն երազելով սուրի
 հակառակ կողմը , իրը կատակ Մէլիք
 Մէլոյի կանակին կ'իջեցնէ : Աոյն միջոցին
 Մէլիք Մէլոն իւր անթիւ քաջօրէն
 յաղթութիւնները միտքը բերելով
 կը մտնչէ իրը զաւսած , և ահեղ զօ-
 րութեամբ կը զարնէ սրով Պուզոս ախ-
 պօր + Եւրը մտղերով հանդերձ գլխէն
 վար կը բերէ : Ս. հա այս է յաղթութիւ-
 նը (6)

կոխապանցիք ի շնորհս Մէլիք Մէլո-
 յին յաղթող դասն , և ի վարձատրու-
 թիւն իւրոց քաջութեանց հետեւեալ
 յարգանքներն ընկալան :

Շահ-պաղըցիք զոյգ մը սեւ ոչխար
 կը բերեն , և գեալն զարնելով կը դի-
 նեն նոյա սաջեւ . և յետ այնորիկ զա-
 նոնք մէյակ վայտի վրայէն կախելով
 քանի մը կարիճ երիտասարդներ հիւ-
 բերու մէջ տեղէն ընթանալ կըսկսին :

Փա՛ռք կոխապանցւոյ քաջա թեան... :
Երկու խումբերու շարժումն նազարանե-
րը վարնելով զարնելով՝ ուղղակի գիւ-
ղի մէջի բնագարձակ վայրը կ'առաջնոր-
դեն . ուր է խամրա Եղոյի տունը . սա-
կայն գիւղը մտած չը մտած խել մը բն-
տանիք կը վազեն , կը դիմաւորեն զա-
նոնք և իւրաքանչիւր հիւրերու ձեռքի
վայտերը կ'առնուն ու կը տանին :

Մոյն պահուն հիւրերը թող սրա-
տես ըլլան հա՛ . . . և դիտեն , քննեն ,
ու խմանան , թէ իրենց վայտերէն որը
որու տունը տարուեցաւ . քանզի կը
պարտին նոքա ըստ օրինաց իրենքն
ալ իրենց վայտին հետ գիշերը հոն
հանգչիլ : (7)

Ժամը երեկոյեան տաներկու քն է .
կոխապանցիք իրենց նպատակը ի կա-
տար հանելու դեռ շատ ժամանակ ու-
նէին : Արդէն յողթող ըլլալուն՝ ձայ-
ներնին միշտ բաճրէն կ'ելլէին : Կը հրա-
մայէին , կ'ուտէին , կը խմէին և կը
պարէին ամէնքն ի միասին սյուզեա-
լսելով ,

« Կաա տուն աղէկ տուն ի »
« Ի՞նչ անեմ գինի չունի »

Գինի չըկայ . . . :

Անվիճապէս գինույ լիտրանոց տա-
փայնեքը , տակառներու , կասարանե-
րու քովէն ելլելով հոն , կոխազանցուց
քովը կը գազեն , և կարդաա կը շարու ին-
քանդի ըսինք թէ , գիւղս ամենա-
պատուական , զօրաւոր և առատ գինի
կը գանաք :

Կոխազանցիք այն հիտաքանչ հղօր ո-
գին այնչափ առատ տեճնե՛րուն պէս ,
իրք թէ գինի լըցողները քիչ են (Ի՞նչ
բնեն որ հրամայելու առիթ ունենան)
կը կրկնեն իջնոց կիօսքը այսպէս :

« Կաա տուն աղէկ տուն ի »

« Ի՞նչ անեմ գինի չունի .

« Գինի տնի լըցող չունի ,

« Թուէ՛յ լէ՛յ լէ՛յ լէ՛յ լէ՛յ լէ՛յ » :

Ճճա ամէնքն ալ այսպէս ինքզինք-
նին բազասի նուիքամ , ա բնակչանա-
բար խելաթափ եղամ՝ կ'երգ են կը խա-
ղան շափաղանց , և այն մշկահոտ գին-

1.07 բաժնակները դարձեալ պարուկելով
անընդհատ :

Կրղիթ* Յոխասաօփ քանի մը երիտա-
սարդներով հանդերձ ահագին տաշափ
մը մէջ ոչխարաց խորովածներ կը բերէ ,
և կըսկսի ժողովրդեան մատակարարել .
այս այն խորոված ոչխարներն են , դու-
րոնք Կոխպանցիք հեաերնին բերած
էին :

Չարմանալի բան . . . կրղիթը այս
ժաէն իւրաքանչիւրին բաժնելէն յետոյ ,
թիակ կոչուած ուկորը մտով հանդերձ
սեղանի ճիշդ մէջտեղը կը դնէ : Շահ-
պազըցի երիտասարդներէն թխամորթ և
կարճ հասակաւ մէկը յառաջ կը նետուի
և այն ուկորը կ'առնու , բաղմականաց
Չարմանքը յինքն գրաւելով :

Այս նշանաւ (ըստ սովորութեան)
ըսել կ'ուզէ թէ , վաղ առաւօտ պատ-
րաստ է ինքն Կոխպանցւոց երիտա-
սարդաց մէկուն հետ ձեռքով մենա-
ճարտութիւն մը ընելու , ուստի հարկ է

* Գիւղի քահեան :

որ նոքա ալ իրեն դէմ ելլելու մէկը
պատրաստեն :

ԵՂՅԻ ԱՂԶԻԿԸ ՄԱՐԳԱՐԻՑ

Արշալոյսը իւր արծաթափայլ առա-
ջին նշոյլները Հայոց աշխարհին վրայ
կը տփռէ , տեղի կուտան աղջամղջին
խոր տխրութիւնք , գիշերուան թա-
դուհին իւր արքայական դահէն ալ իջ-
նելու ստիպեալ էր , կը խոնարհի այս ,
զի գերազոյն քան զինքն , ինքնակալն
ամենայն մուրաակաց , իւր սայրասուր
սուսերաց առաջնորդութեամբ ընդ-
միջնորդս տիեզերաց դայ ի ման . մէն
մի մուրակ , մէն մի աստղ ի կորուստ
կը դառնան : Հովիւը սրինքն ի ձեռին
ունի , կը սուլէ մեղմօրէն երկոյս , ոչ-
խարաց առ ինքն թողուելու նշանն էր
այս . կը սուլէ երկկոյս , ճամբաց ելլե-
լու նշանն էր . կը սուլէ և ապա մի ան-
գամ և կը տեսնես որ այն անբան կեն-
դամեփները , այն յերկնից մարդկութեան
պարզեւած անմեղ ոչխարներն ու դառ-

Նա կեները ի մի կարգ՝ հովուոյն ետե-
 աէն կ'ընթանան, ի պաշտպանութիւն
 սոցա քանի մը ճիւղի պէս ճերմակ և
 առիւծի նման դորաւոր, տիրաւէր
 շուներ հօտը շրճապատած կը քալեն
 վեհարար :

Երթալով երթալով լուսոյ դորա-
 թիւնը կը յաւերու, և անկէ մաս մը ա-
 դաւարար խամբա Եղօյի փոքրիկ պա-
 տուհանէն հաղիւ հաղ ներս ցոլայնե-
 լա պատեհը կ'աճենայ :

Եկեղեցւոյ խորհրդաւոր երկաթեայ
 կոշնակը հաւատայեալները իւր Ս. ծա-
 ցը կը հրաւիրէ. կոխազանցեայ համար չէ
 այս, նոքա այն դորաւոր դիմիէն և
 այնքան պարելէն թմրեալ մտքեր են
 մինչև անգամ երթալ հին, որ վայ-
 տերնին անհամբեր իրենց կրօնասէն,
 մտքեր են, որ օրը կ'իջանի է. դան-
 դապելա միջոց բնաւ չըկայ : Կարծեմ
 թէ մեր Քաթոլիկ աղայի խեղքը քիչ մը
 տեղն էր, որ կարող եղաւ սա խօսքն
 արտասանելու «ու՛՛ հերիք խալէ՛ք, ու՛՛
 ձեր խաղիս սրճնա՛մ չըկայ, է՛ք՛ք :

էլէ՛ք ավա . մեր խարսն առնենք փա-
խենք ըստեղէն , էստտեղաց գինին մե-
ծուռ կանի , գխաէ՛ք » :

Կոխադանցիք երբէք առնկեցիք շե-
ղան Սերովբէ աղայի խօսքին . միեւ-
նոյն ընթացքը պահեցին մինչեւ ցե-
րեկուան ժամը եօթին : Ալ հիմա, հի-
մայ կըսեմ ազատելու ժամանակ չբնաւց
տաքի կ'եղեն ամէնք ի միասին և հարան
առնելու կ'երթան :

Խամբա Եղոյի աղջիկը , Մարգարիտ
առաներկու ասրուան մատղաշ օրիորդ
ձրնէր . իր հայրենական առնէն հե-
ռանալու համար ամսէ մը ի վեր կը հա-
լէր ու կը մաշէր :

Այն ոսկեզօծ շէկ մաղերը ցրիւ առ-
ցրիւ իւր փղոսկրեայ պարանոցը կը
ծածկէր , ճակատը այնքան ընդարձակ
որ հայուհւոյ մը միայն կը պատկանէր .
չաղանակազոյն յօնքերը դողցեւ ալ-
ու ետտակեալ դժի մը նման կամարակապ
իւր աղաւնանման դիւթիչ աչերուն .
վրայ դած էին . Ա՛հ , այն աչերը ,
այն աչերը կըսեմ . թէ և չափադանց

արցունք թափելէ արիւնով լի, թէ և
որտի անհաշտ կսկիծէն մառախլապատ,
բայց և այնպէս անոր նայողը անտարա-
կոյս պիտի հաւատայր, որ հողագնթիս
վրայ հաղուագիւտ մընէր :

Արցունքները որուն որուն կը հո-
սէին, ո՛հ, այն չքնաղ լուսոյ լճէն, և
իւր վարդագոյն կարմիր ճերմակ պտե-
րէն սողոսկելով նորա քնքոյշ ծոցը կը
խուսէին ևս ընթերցող, լսէ, լսէ՛ իւր
մեղմահառաչ ձայնին. ունկնդի՛ր եղիւր
իւր անարուեստ բայց սրտառու շերտին,
որ փոքրիկ և անշուք սենեկի մը մէջ
քաշուած աղիտորմ հեկեկանօք կըսէ,

- «Մայր իմ, մայր իմ, ա՛խ մայր իմ,
- «Դու չը մեղքեցա՞ր Մարգարտին,
- «Կոխարանից չոր չոր կռեր՞,
- «Չը կանայ կոխել իմ տօտեր :
- «Մարգրիտ իր գեղ խէրական՞»,
- «Հեա ասու որին՞՞ տալ փոխան,

- Ժայռեր.
- ** Հայրենական.
- *** Սշխարհին.

« Չը կանայ, չը կանայ, ա՛խ մայր իմ,

« Տէ՛լ չե՞ս գթար Մարգարան :

« Ինչի՞ս պէտք է օտար գեղ,

« Չիկ շատ աղէկ է էստեղ,

« Չեմ, չեմ երթար ա՛խ մայրիմ

« Ինայի իմ դառն արցունքին : » (8)

Ինչպէս ընինք այն տասներկու տարուան մատուալ օրիորդը զոյս և ասոր նման շատ մը հառաչներ ըսելէն յետոյ, մայրը և ազգականք կուգան տղայական խաղալիքներով համողել զինքն, սակայն դարձեալ լալով սղբալով կը տանին ապուցանել այն զգեստները, որոնք հարսի մը միայն յատուկ են :

Էս յարմար կը դատեմ զգեստներու շարքը և թիւը մի առ մի հետաքրքիր ընթերցողաց հաղորդել :

Քանի մը ճերմակեղէններէ ի դատ, հինգ հատ ալ պճղաւոր զբոսն (էնթէրի) և գուճ (ճիւպպէ) մը կը հաղցունեն այս կերպով :

Նախ՝ պատճառ թողուի մը, վրան խոխոն մը, անկէ վերջ շոճ զբոսն մը, անոր

վրան շալէ շաւան , իսկ աստիճան ալ արտնայ
ամենուն վրայ , չը մտնամք յիշերու որ
ասոր կերպասը կարմիր գոյն ունի ,

կարգն եկաւ գլուխը շինելուն : Ա-
ռաջին անդամ արծաթեայ ըստ մը քիւն
վրայ գլուխը կը դնեն , անոր առ-
ջեւը , այսինքն ճակատին վրայ կարգ աւ-
տակներ կան կարուած , իսկ բոլորտիքը
խել մը կարգներ կը պլլեն : Յետոյ բայ
կարգին ալ գլխոյն վրայ կը ձգեն ընդ-
երկար , որ մինչեւ մէջքը կը հասնի :

Մնայ քող մը , այն ալ հասա ու ա-
պրշումէ մեծ կակ սիւռոյ մ'էր , որ այն
եւս գլխոյն վրայ ձգեցին , և հոն ան-
կիւն մը կայնեցնել հրամայեցին : (Ծ)

Հարսի այն զգեստները հօր կողմէն
չեն գլուխը . այլ փեսայի կողմէն , ու-
րոնք պատկի նշանը օրհնած օրը խնա-
միս տունը կ'երթան , և սակարկութիւն
կրնեն զգեստներու համար , և այս սա-
կարկութեանը կրանն , կարգաւ :

Իսկ քողը կնքահօր պարտքն է ,
զոր ինչպէս Սարգէան Սերտիքէ աղան
կատարած էր :

ԵՐԿՐՈՐԴ ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Կնքահայր ուղայի փոխանորդ Պ-
 խաչիկ և փեռայ կակոսի եղբայր Մնա-
 ցական երկու կողմէն հարսին թեւք կը
 մանան դռնէն դուրս հանելու հա-
 մար, Սերովրէ աղան 200 հատ մէկ
 փարանայ ստակ ՚ի սլասախ հարսին՝ կը
 զրուէ նորա դիւանի վրայ, և դռնը
 բանող երկայնահասակին ալ ՚ի նուէր
 զւրի ծայրը մեծ կակ շալ մը կը փաթ-
 թէ, դարձեալ կնքահայրը աւար անոր
 նուէր ստակ կը հրամայէ որ խը բծա-
 ւոր ճեղսակ ձին, որուն վրայ ինքն
 երբեմն նստած էր, յառաջ բերեն, և
 հարար վրան դնելով կըսկսին երթալ
 զուրա նազարայի առաջնորդ ու թեամբ:

Ս.յն ինչ կտխապանցիք «մնաս բար-
 եա» կըսէին: Շահապարցի թխամորթ
 երկաստաւորը «ա՛՛՛ ա՛՛՛ կ'երթաք»
 դէմն երնայ չըկայ, մանկեմար՝ կը պրծը-
 նէք մեր ձեռքէն: Իսկով յառաջ կար-

շատ է, և իր հետ մենամարտակից կը
խնդրէ :

Մէլիք Մէլոն « կե'օ' էկայ » կրտէ,
և անոր հետ մենամարտելու հաւանու-
թիւն կուտայ : Իսկ Շահադադըցիք ա-
մէնքն ալ « չէ', չէ', դու չես կանայ դայ'
մէկ անդամ էկար, միկայ էլ ուրիշ մը
թող դայ » կը պատասխանեն. այս երշ-
մարտութեանը ոչ ոք չը կարենալով
դէմ դնել, ուրիշ երիտաւարդի մը կը
յանձնեն զայն :

Ընթերցո՛ղ, չը կարծես որ այս մե-
նամարտութիւնը առաջնայն նման է, զի
ո՛չ տուր, ո՛չ վահան և ո՛չ այլ ինչ ձեռ-
ու ընին ունին. այլ բազկի զօրութեամբ
միայն է այս յարթութիւնը : Այո՛, Հա-
յաստանցի հսկաներու բազկի զօրու-
թիւնը, սրոյ և վահանի ընկեր է : Եր-
կու երիտաւարդներ թեւերնին և ու-
ներնին սօթթամ՝ երբեմն հեռանալով
հեռանալով և ապա ընդ դիրեար կը
հարկանին. երբեմն բազուկներնին պար-

զամ ահադին հարուածներ կ'իջեցնեն .
և երբեմն ալ ծունկի դալով զիրար
դեռնաթաւալ ընելու փորձեր կ'ընեն :

Ճարտար գանուեցաւ Շահադադըցին .
կոխադանցւոյն ալ ոտքը բռնածին պէս
երեսն ի վար դեռին թաւալեց , ու գը-
նաց գլխոյն վրայ կեցաւ , և այսպիսի-
եաւ յադթու թեան տէր եղաւ :

Ս . ԼՈՒՍՆԱԻՈՐՉՍՅ ՎՍՆՔ

Ժամանակը հասած է , զորանա նադա-
շայի ձայնը կը բարձրանայ դարձեալ ,
կոխադանցիք ճամբայ կ'ելլեն , թէև
վերջի պարագայիս մէջ անյադթող :
Հարար կ'ուլայ , և իւր քով կեցող պա-
ռաւ կիներ որ վառուած մեծ մամ'մը
ձեռքը բռնելու է , կը մխիթարէ զանի
տղայական պատրանք :

Կոխադանցիք թող իրենց ճամբան
շարունակեն . իսկ մեք ընթերցողիդ
հետ մէկտեղ նոցա գիւղը երթանք ,
տեղւոյն հետաքրքրու թեան արժանի
կէտերուն տիրանատես ըլլալու :

Ռէս Մաւառոյի տունէն աղապներու
 խումբ մը , փեռաց կակոս մէջերնին ու
 ներով դուրս կելլեն* : Աղապար Միւր-
 դոն ուրոցէն ի դատ ձախ ձեռքովն ալ
 թրոշակաւոր թուր մը բռնած է , և
 ամբողջ դէպ ի Ս . Գրիգոր Կուսաւորչ
 չաց վանքը կ'առաջնորդէ :

Քիչ պարծանք չը բերեր այս վան-
 քը ընդհանուր Հայոց և մանաւանդ
 Կոնստանդուպոլ : Պատմութիւնք կը հաւ-
 տատեն , թէ Ս . Հայրն մեր լուսաւո-
 թիչ Հայաստան լուսաւորեցէն , և զՏրր-
 դատ մեծարքայն Հայոց մկրտեցէն զկը-
 նի , Եորին վեհափառութեան բարձր
 հրամանաւ հոս , այս ձորոյս մէջ ե-
 կա , և շքեղ վանք մը կառուցանել
 տուաւ յանուն Հռիփափեանց կուսից ,
 (այժմ Ս . լուսաւորիչ կ'անուանեն , և
 հետթեանց մէջ Յայնապատու վանք
 եւս կը կոչի :) Կըսուի թէ Հռիփափ-
 մէի հողաթափը և փողպատը սաճա-

* Փեռան հարսիկիք երթալու սովորու-
 թիւն չրկայ .

ըիս կամարին մէջ ամփոփուած է :

Անշուք է վանքս , երեք մասունա-
չափ եկեղեցիք և քանի մը հիւրերու
համար խուցեր միայն ունի . երբեմն
միանձուք սորա բաղմաթիւ էին , իսկ
այժմ ոչ բնաւ :

Դիրքը ամենագեղեցիկ և զուար-
թարար վայր մընէ : Հարաւային կող-
մէն դալարագեղ ձորի մը մէջ , վերին
վարագէն իջած Մասնապատ անուն ,
անոյշ և բիւրեղի պէս փայլուն ջուրը
քաղցրիկ քաղցրիկ կարկաչմամբ կ'ըն-
թանայ արագապէս , և երբեմն բարձր
Ժայռերէ սպրթելով իրեն ձիւնի պէս
սպիտակ փրփուրները կանանչազարդ
և հոտաւէտ ծաղկանց վրայ կը սփռէ ,
ա՛յն ծաղկանց վրայ , որք թէ գեղեց-
կութեամբ , թէ իրենց անմահական
հոտով , թէ դալարութեամբ և թէ ի-
րենց չափաւոր հասակաւ ա՛յո ,
Աստուածուհւոյ մը նման կը նազին :

Վանքիս արեւմտեան կողմ զառի-
վայրի մը վրայ փոքրիկ մատուռ մը ծա-
ռերաւ խիստ առ խիստ շարքէն հասիւ

կը նշմարուի . կ'ըսուի թէ այս մատու-
 ուր Ս. Լուսաւորչայ բուն իսկ աղօթա-
 տեղին էր : Իւր շուրջը յորդահաս և ա-
 նուշահամ աղբիւրներ շատ են . կայ
 նաև աղբիւր մի կաթնահամ , զոր
 Սուրբն ինքն բղխեցուցեալ է :

Վանքիս հարաւային դիմաց վերու-
 յիշեալ ձորին կից , ընդարձակ դաշտ
 մը ընկուղենիներով շքեղացած է աննը-
 ման . արեղական ճառագայթները չեն
 կարող թափանցել բնաւ . վանքս և
 կայ բաղնաթիւ ուխտաւորաց վրաններն
 են ասանք :

Հինաւորց ընկուղենւոյ մը մերձ
 բարձրկեկ ժայռի մը վրայ աշապ-տաշ
 Սիրղոն թրօշակաւոր թուրը և աւելի
 ձեռին կայնամ՝ դէպ ի վանքին հիւսի-
 սային ձորը կը հայէր աննապիշ . կե-
 րեւար թէ բանի մը կըսպասէր :

Ս.յս , հարաին դարձաւանս համար
 կեցեր էր . և ահա անանք այլ կը յու-
 աւցուի թէ կու գան , բանդի զուանա և
 ծաղարայի ճայնը ձորը կը թնդայնէ :

Ճիշդ կոխապանցիք՝ իրենքն են ,
ձայներէն ալ կը հասկցուի , ահա՛ կու-
գան . . . հարար կը բերեն կոր խուռն
բաղանթեամբ :

Եւ երբ սոքա բաւական կը մօտե-
նան վանքին , փեռայի փոխանորդք այն
է . . . իւր ձեռքի թրօշակաւոր
թուրը կը բարձրացնէ և ծածանելով
դայն կ'աղաղակէ մեծաձայն :

«Տօտընըզ մըզ մըզ տօ'ս'տ' . . . :»

Ըսել կուզէ թէ բարեկամնի՞ս էք :
Ի պատասխանի սորա ամենքն միաձայն
այսպէս կը դռչեն ,

«Տօտընըզ նըզ նըզ տօ'ս'տ' . . . :»

Այսինքն բարեկամնի՞դ ենք , բա-
րեկամնի՞դ :

Այս անդրադարձ աղաղակներով
վանքի դուռը կը հասնին , հոն ալ կը
զարնեն , կը խաղան շախաղանց , և յետ
այնորիկ եկեղեցի կը մանան պսակի Ս.
խորհուրդն ու կարգը կատարելու :



ՊՍԱԿԻ ԱՒԱՐՏՈՒՄՆ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Եկեղեցւոյ Ժամացոյցի զանգակը
դիշերուն երեքը կը զարնէ . պսակը
կը լմնայ . և բազմութիւնը հարան ու
փեռան առած՝ վանքի ընդարձակ բակը
կ'եղեն :

Ամբոխը երկուքի կը բաժնուի : Ե-
րիտասարդները էրիկ մարդերով փեռայ
կակոսի առջեւէն կարդի կը մտնան .
իսկ օրիորդները կանանց հետ մէկտեղ
հարսը Մարդարիտը կը շրջապատեն .
սոցա մէջն է նաեւ օրիորդն Շուշան
քոյր կակոսին , որ աչքը դէպ ի վանքի
դուռը սեւեռած մտաւանջութեամբ
կը հայէր : Ի՞նչ էր այս , եթէ ոչ սրտի
բարութիւն մը . . . : Ա՛հ իւր ընկերուհ-
եաց . . . անձկալի հովուուհեաց կըս-
պասէր . . . : Այլ ահա՛ , ահա կուգան :
Շուշան դէպ ի դուռն կ'անապարէ ,
քանզի իրենց ամենօրեայ երգած երգը
կը լսէ , ոչ ոք չըզիտէր զայս , ոչ ոք
եղանակած չէր , իրենք երգեր , և լեռ-
ներն ու ձորերը ունկնդիր եղեր են .

խնչո՞ւ ուրեմն մենք ալ մտիկ չընեմք
այս գեղջուկ երգին :

« Լուսնակն էլաւ սարի ծոցէն

« Փթթեցուց ծաղիկք զրակէն .

« Խօրօտ քոյրերս ձեռք տանք ձեռաց

« Պարենք երգենք մէջ մեր դաշտաց :

« Ապրեն մեր ծնողք ,

« Ապրեն և մեր հօտք :

« Կարտիր կաշիւն և գինարբուն ,

« Քաղենք շարենք վեր մեր գլխուն ,

« Ասենք խնտանք չու՞մ՝ իրիկուն ,

« Խմենք ձորիս ջուր պսպղուն :

Ապրեն մեր ծնողք և յին :

« Թող մեր տօտերն ընեն բուպիկ ,

« Թող զիր սրուին մեր խոպուպիկ ,

« Խօրօտ քոյրերս ձեռք տանք ձեռաց ,

« Պարենք ասենք մէջ դաշտերաց

« Ապրեն մեր ծնողք ,

« Ապրեն և մեր հօտք :

Ապա ներս կը մտնան Լուսնափար

և Մանգուխտ հովուուհիք, հարար աւե-
աածնունս պէս, արդէն ժողուած գոյն
զգոյն ծաղիկները նորա գլխոյն վրայ կը
սփռեն, և իրենք ալ ներկայ եղող օ-
րիորդայ կարգը կ'անցնին :

Երկուքի բաժնուած ամբոխը մտե-
րով ծաղիկներով շառնա նազարայի առաջ-
նորդութեամբ մինչեւ գլուղը կը գնան
Ռէս Մառտոյի տունը կը հասնին, կը
գողբի նուագարանի ձայնը և հետեւ-
եալ երգը անոր կը յաջորդէ :

ՍՌ ՍՍՅՐՆ ՓԵՍԱՅԻՆ

« Թաղաւորի մէր դուրս էլի .

« Քէ ինչ ւ ինչ ենք բիրէ ,

« Քէ կէօլի կազ ենք բիրէ .

« Տախտ աւիղող ենք բիրէ .

« Թոնէր վառող ենք բիրէ .

« Աշխար կլծող ենք բիրէ : »

Եւ ասոր նման շատ մը խօսքերու
չարք :

Մոյն միջոցին փեռայի մայրը և հօր-
եղբոր կինը ներսէն դուրս կուգան .

առաջին (մայրը) մէկ ձեռքը դիւար
 ստիպողը բռնած , միւս ձեռքովն ալ
 սկաւառակի մը վրայ բաղարջի և բոխին
 դի շարք մը դիւարին վրայ դրած ունի .
 և հօրեղբօր կիներն ալ ահագին հոպէ նայ
 պնակ մը երկու ձեռքով հագիւ բռնելը
 է : Ըստ եղանակի վերայիչեալ նրդին
 այս դիրքով կը խաղան սօքա :

Անդին փեայի և հարսին առջև
 երկու ոչխար զոհ ըրին . զոհ մընալ
 թող կակոսի հօրեղբօր կնոջմէն ըլլայ :
 Իբ ձեռքի խոշոր պնակը գետին կը
 զարնէ այսպէս ճշերով

- « Կտարի քեասէն ,
- « Ապրի փեասէն : »

Այս արարողութենէն վերջ երկու
 հոգի հարսին թեւերը կը մտնան և « աջ
 ոտքդ ներս թա՛լ » ըսելէն յետոյ , կը
 տանին բաղմեցունել իրեն յատուկ
 Բ-Ի-Ի-ին վրայ :

Սա ալ առաւել քան դիտեամն ելու

* Նկատէ :

բէք արտօճու թիւն չունի խօսելու : Ե-
թէ դուռնէն մէկը մտնէ , ով կըլլայ
թող ըլլայ անսխալապէս ոտքի պիտի ել-
լի , և գայ նորա ձեռքը համբուրելու .
ժամերով , օրերով այն թանձր քօղին
և այնքան հազուամաներու տակ ճնշած
կը մնայ :

Հրախրեալք կը ճաշեն . և ապա
խնամի Հլոյի մեծ սրահը կ'երթան պա-
րելու , հոս ասանդակէ ի դատ , ամէն ոք
աղատ է գալ անխափր : Խաղտուն կը կու-
չի սա , մինչև լոյս փակը աղայի հրա-
մանատարութեամբ սրահը դասուն նաղա-
րայի և աղասիներաց ձայնէն կը թնդայ :

ՓԵՍԱՅԻ ՊԱՐԸ

Այն ինչ առաւօտեան թռչնեկաց
քաղցր դաշտայր վանահօր ակամօին
կը դարնէ , և արփին իւր ակեփնջիկ
ճառագայթներով վանքի գմբէթը
կ'ակեղծէ . Տ. Թ. Հայրը կ'ելէ ան-
կողինէն արագապէս . և մշակի մը հը-
րամոյելով Աւետարան և շուրջատ մը

բերել կուտայ, կ'առնու և ուղղակի
Ռէս Մառտոյի տունը կը վազէ : Հրա-
ւիրեալքն իսկոյն կը գիտաւորեն զանի .
և կը մնան Նորա հրամանին անհամբեր :

Եստ չըտեւեր, վանասօր մէկ հրա-
մանաւր, հոն որչափ մարդ կայ, ա-
մէնքն ի միասին տան դրան քովի քա-
րին վրայէն այծեամբնու հման տանեաց
վրայ կ'ելլեն, որոյ կը հետեւի նաեւ
ինքն վանասայրը, փեայի թեւ մտած :

Ս. յԺՄ փեայի բերնի ինձորը կ'առ-
նու Հայր սուրբը և ի փոխարէն՝ եկե-
ղեցւոյ շուրջաւր կոնակը, և Ս. Աւե-
տարանը գիրկը կուտայ . մէկ թեւը
ինքն, միւս թեւն ալ Ռէս Մառտոն կը
մտնայ, և այս գիրքով արք և կանայք
խառն երկուցն կը շարունին : Զոտնա նա-
զարան ձայնակից գոչով նոցա կըսկսին
հետեւեալ երգն եղանակել ու պարել :

« Ա. յԴ բարեւ ո՛յ »

« Ա. յԴն արեւուն տանք բարեւ, »

« Տայ մեր թագաւորուն, թագաւորոյն »

չա՛տ արեւ : (40)

« Այդ բարեւ ա՛յ . . . »

« Այդն արեւուն տանք բարեւ ,

« Ս. Աստուածամօր տանք բարեւ ,

« Տայ թագուհւոյն շատ արեւ :

« Ս. Լուսաւորչոյ տանք բարեւ ,

« Տայ թագաւորուն շատ արեւ :

« . . . »

Եղանակը կը փոխուի , հետեւաբար
և պարը , քանզի հետեւեալ յորդորը
կ'երգեն .

« Աստուած պախէր մեր թագաւոր ,

« Եւ թագուհին խերով մերով .

« Աստուած պախէր մեր թագաւոր ,

« Եւ թագուհին քախորներով :

« Աստուած պախէր մեր թագաւոր ,

« Եւ թագուհին սերով բարով : »

Յետ այսորիկ վանահայրը Աւետա-
քանը ձեռքը կ'առնու և կարճ օրհնու-
թեամբ և պահպանիչով մը վախճան
կուտայ պարին : Համայն և այնպէս եր-
կու պառաւ կնիկներ կուգան և փեայ
ծակոս դէպ ի վարագոյ Ս. Խաչը կը
դարձունեն զայս ասելով

« Մուրբ խաչի դէմ կայներես ,

« Մուրբ խաչ քէ պախի պարզերես ,

« Բարով քո թագուհի վայելես : »

Դէպ ի վանքը կը դարձունեն :

« Լուսաւորչայ դէմ կայներես ,

« Կնիկ պախի քէ պարզերես .

« Բարով քո թագուհի վայելես : »

Դէպ ի թօղիկ ճգնաւորի այսր կը
դարձունեն .

« Թօղկայ դէմ կայներես ,

« Թօղիկ քէ պախի պարզերես

« Բարով քո թագուհի վայելես : »

• • • • •

« • • • • • »

Դ Ի Տ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն Ք

1. Արդարեւ չը գիտէր սա իւր պատկառելիքը, և նման են տես նաեւ ամէն երիտասարդք, յառաջմանէ իրենց հարսը տեսնել մահկանացու մեղք սեպելով (ի շնորհս նախապաշարեալ անձանց) վերջէն ինչ ինչ գէշ հետեւանքներ յառաջ դալը յայտ խակէ :

2. Ասանկ Ս. ծառեր, Ս. քարեր շատ կան ոչ ոնց է, շատ հրաշքներ կը վննին եղերյուտով եմ, թէ գիտութիւնը ընդ հուս պիտաի սովբեցնէ ծնողք եղող իդական սեռին և հետեւաբար ընդհանուրին, փարատել զայս և ասոր նման պժգալի նախապաշարումները :

3. Նուիրական է այս առուցը, և իրր եկեղեցւոյ սրբազան օրէնք մը կրնդ ունուի :

4. Նախապաշարում, մինչեւ ցերբ տիրես ողորմելի ժողովրդեան, մարդ և բանական է, տակայն ուրիշ մը իր փոխարէն կը խօսի: Ի՞նչ կը նշանակէ այս — յիշտայ է . . . :

5. Գիւղացւոյ ընդհանրապէս սովորութիւնն է հիւրեր կերակրել, բայց ինչո՞ւ Արիստանցիք պարենով դացին, — որովհետեւ ինտամիներու մէջ նախանձութիւն հաստատ է, չըգիտեմ թէ վա՞սն էր :

6. Ի՞նչ կ'ըսես, ազնիւ ընթերցող, Նե-

բոսպական մենամարտութեան կը հաւատարի՞
սա . ես կ'ըսեմ թէ , եթէ տեսնես նոցա
խրոխտ նայուածքը և դինաշարժութիւնը ,
անտարակոյս զանա՛ք Յւրոպացիներէն նա-
խադաս պիտի համարես : Մէլիք Մէլօն կոչ-
ուած մարդը արդարեւ տեսնուելու արժա-
նի մէկն է :

7. Այս մասին իրաւունք ունին , քանզի
այնքան բազմութիւն մէկ տան մէջ գեանե-
ղիլը անկարելի է :

8. Ինչ անդ թութիւն . . . այն մատուաշ
օրիորդը իւր հայրենական տունէն կողրպ-
տել , առանց ոչինչ պիտնալու կարգել և
յետին թշուառութեան մէջ ձգել . . . :

Այս ախարը ընդհանրացած է Հայաստա-
նի մէջ , որուն համար կ'ուզեմք ուրիշ ան-
գամ մը երկարօրէն խօսիլ :

9. Ա՛ւմ հողն է , որ այս բեռին տակ ան-
թիւ մարտիները գտնուեր են . շնչառու-
թիւնը չ'ա՛րգելուր , ջիւղերու տկարութիւն
չը՞ պատճառեր . . . քեզ կը թողում դատել
ընթերցող :

10. Քաջ խելամուտ եղի՛ր Քրիստոնեայ
Հա՛յ , արեւուն բարեւ կուտան , որպէս դի-
տրեւն ալ փեռային ու հարսին արեւ (կեանք)
տայ : Անշուշտ եմ , որ կը հասկընաւ խորա-
գէտ Հայ , թէ այս՝ մեր կուսակաշտութեան
օրերու նշանն է , որ ցարդ կը շարունակի :

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.


Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.



7585

7586

7587

7588

7589

7590

000 3646
000 3647
000 3648
000 3649
000 3650
000 3651

2013

